№ 39 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 4 1889 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 4 № 39

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վնասակար գործունէութիւն. Գրքերի հրատարակութեան ընկերութեան ընդհանուր ժողովը. Նամակ Մոսկվայից. Նամակ Արդուինից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տիրարի մինիստրութիւնը. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մատենագրութիւն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՆԱՍԱԿԱՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Բոսֆորի տիերում հրատարակվող բազմաթիւ հայ լրագիրներում շատ է պատահում կարդալ այսպիսի խօսքեր.

«Ազգային լրագրութեան սրբազան և նուիրական պարտաւորութիւնն է ուղղամտութեամբ և անկաշառօրէն ծառայել ազգային շահուց, դիմադրել ներքին և արտաքին թշնամեաց, պաշտպան հանդիսանալ Հայաստանեաց սուրբ և առաքելական եկեղեցու դարևոր աւանդութեանց, և մոռանալով անձնական դիտումները և շահը, մի կէտ նպատակի ունենալ,—այն է ազգը և ազգային շահերը»։

Խօսքեր, խօսքեր, և խօսքեր, որոնք շատ անգամ աւելի ճռճռան ֆրազների ձևով համարեա ամեն օր դուրս են գալիս Պոլսի «ազգային օրգաններ-թերի» մէջ գործող բազմաթիւ և բազմերանգ գրչակների ծայրից, ի խայտառակութիւն ամբողջ հայ մամուլի....

Խայտառակութիւն ենք ասում, որովհետև այդ կոկված ֆրազները, և այդ գեղեցիկ խօսքերը, որոնցով այնքան շռայլ են Պոլսի թուղթ մրոտողները, ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի կեղտոտ դիմակ այն մարդկանց համար, որոնք գրիչը և մամուլը դարձրել են անարգ շահասիրութեան և անձնական զաղիր նպատակներին հասնելու մի միջոց։

Եւ հէնց դրանով պէտք է բացատրել այն տխուր հանգամանքը, որ Կ. Պոլսում տարիներից ի վեր հրատարակվող բազմաթիւ օրգանները, որոնց մեծ մասը գիսաւոր աստղերի նման շատ շուտ են մարում և անհետանում, ոչ մի որոշ գոյն են ցոյց տալիս, ոչ որոշ համոզմունքներով են ղեկավարվում իրանց գոյութեան ընթացքում, և ոչ էլ մի հաստատ և տեղական գիրք են բռնում դէպի այս կամ այն հիմնարկութիւնը, այս կամ այն հարցը, և այս կամ այն հասարակական խնդիրը կամ հասարակական նշանակութիւն ունեցող անձը։

Թիւրքահայերի մամուլը իսկապէս մինչև այժմ երկու գլխաւոր նպատակի է ծառայում, մի կողմից նա ծառայում է զանազան «տէր և անօրէնների» շահերին, իսկ միւս կողմից նա գործիք է այս կամ այն ազդեցիկ էֆէնդու կամ եպիսկոպոսի ձեռքում, որոնք յարաբերութեան մէջ մտնելով մամուլի ղեկավարների հետ՝ իրանց շահերի և ցանկութիւնների համեմատ, ամեն օր փոփոխել են տալիս լրագիրների ընթացքը և ուղղութիւնը։

Այդ բոլորի մէջ, հասկանալի է արդէն, որ գլխաւոր դերը խաղում է փողը, դէպի որը մեծ թուլութիւն ունեն Կ. Պոլսի գրական գործիչները։ Կաշառքով, և այն էլ մի քանի ոսկով շատ հեշտ է կաշառել Պոլսի այս կամ այն լրագրին, այս կամ այն գրողին, և մի քանի ոսկի չպրտելով դրանց, իւրաքանչիւր ոք համոզված է որ կարող է փառաւոր գովեստներ ստանալ, և հայհոյանք թափել իր թշնամիների վրա, մի երևոյթ, որը տարաբաղտաբար, վերջին տարիների ընթացքում սկսել է մուտք գործել և Թիֆլիսում....

Զնչին բացառութիւնների մասին խօսելը աւելորդ է, քանի որ այդ չնչին և աննշան բացառութիւնները անհետանում են Կ. Պոլսի մամուլի այդ բնաւորիչ յատկութեան առաջ, մի յատկութիւն, որով և կարելի է բացատրել թիւրքահայոց մամուլի ընկած դրութիւնը և համարեա թէ անբարոյականացուցիչ գործունէութիւնը։

Զարմանալի չէ ուրեմն, որ այդ լրագիրները օրը մի անգամ փոխում են իրանց գոյնը և համոզմունքը. այսօր հալածել այս կամ այն եպիսկոպոսին, վաղը նոյն եպիսկոպոսին երկինք բարձրացնել, այսօր գովել այս կամ այն առաջնորդին, վաղը նոյն յարգելի առաջնորդին կասկածի տակ դնել, մի օր այս էֆէնդուն շոյշոյել, միւս օր միւս էֆէնդուն գովաբանել. մի օր անարժանի առաջ խունկ ծխել, միւս օր մի ուրիշին գովաբանել, այսօր այս կամ այն սկզբունքով դիմակաւորվել, միւս օրը նոյն սկզբունքը վնասակար համարել և այլ այդպիսի անվերջանալի աչքակապութիւններ, որոնցից դուրս Կ. Պոլսի մամուլի մէջ այլ ևս ոչինչ չէ մնում, բացի մի քանի բնժասացութիւնների, նշանագրութեան հանդէսների նկարագիրներ և ազգային անցքեր, որոնք շատ չնչին հասարակական նշանակութիւն ունեն։

Եւ այդ բոլորը կոչվում է մամուլ, որը իբրև թէ կոչված է ծառայելու «ազգի շահերին» և հասարակութեանը, որը իբրև թէ գործ պիտի կատարէ և պիտի նպաստէ ժողովրդի առաջադիմութեան գործին...

Երանի, որ հաւատան. իսկ թէ ինչով է արդարացնում այդ տեսակ մամուլը իր գոյութիւնը, ինչի համար է ապրում և ինչու են լոյս տեսնում այդ տեսակ օրգանները,—միանգամայն անհասկանալի է։

Այդ տեսակ մամուլ, աւելի լաւ է որ երբէք գոյութիւն չունենայ....

Խ. Մ.

ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 2-ին, կիրակի օր, երեկոյեան, Թիֆլիսի քաղաքային դումայի չքեղ դահլիճում, վերջապէս կայացաւ գրքերի հրատարակութեան ընկերութեան ընդհանուր ժողովը։

Ժողովը փառաւոր էր բազմամարդութեան կողմից։ Տպագրական ընկերութիւնը իր տասնամեայ գոյութեան ընթացքում այդպիսի բազմամարդ և մի և նոյն ժամանակ մի առանձին ոգեւորութեամբ ներշնչված ժողով համարեա թէ առաջին անգամն է տեսնում։ Ներկայ են զանազան շրջանների մարդիկ. մեծամասնութիւնը Թիֆլիսի երիտասարդութեան և ինտելիգէնցիայի ներկայացուցիչներն են. կան և մի խումբ մարդիկ, որոնք սիրում են «գործիչ» համարվել և դրանց հետ միասին մի խումբ դատնովի մարդիկ, որոնք բերված են ձայն տալու համար, թէև կանոնադրութեան 4 յօդուածը մի տեսակ արգելք է դնում այդ տեսակ ձայնատուների դէմ։ Վերնատանը ներկայ են բաւական թիւով թէ կանայք և թէ տղամարդիկ։ Ժամը 7-ից մի փոքր անց, ընտրութեան ժամանակը անցկացրած, վարչութեան ատենապետը, պ. Աբգար Յովհաննիսեան բաց արեց ժողովը։ Բաց ձայնատուութեամբ տեղի ունեցաւ ընդհանուր ժողովի նախագահի ընտրութիւնը, և ընտրվեց պ. Ց. Ֆիգրանեան։ Վարչութեան քարտուղար պ. Շահբուդաղեան կարդաց ընկերութեան վերջին տարիների գործունէութեան, կարգադրութիւնների և դոյքի ընդհանուր հաշիւը։

Եւ դրանով էլ սկսվեցան վիճաբանութիւնները։ Ժողովրդականներից մէկը՝ պ. Բաբեան հարց է դնում, թէ ինչու վարչութիւնը վերջին ժամանակներս ընդհանուր ժողով չէ գումարել։ Վարչութեան ատենապետը նկատելով, որ այդպիսի մեղադրանքներ մէկը միւսի ետեից շատ պէտք է թափվեն, առաջարկում է բոլոր հարցապնդումները միանգամից անել, որպէս զի բոլոր մեղադրանքներին վարչութիւնը միանգամից պատասխանի։ Պ. Ա. Արասխանեան, իբրև նոր ապացոյց վարչութեան անտարբերութեան, ակնարկում է, որ վարչութիւնը սովորութիւն չէ ունեցել ընդհանրապէս պատասխանել զանազան հեղինակներին՝ թէ արդեօք նրանց աշխատութիւնները ընդունվում են տպագրութեան համար թէ ոչ. և պատահել են դէպքեր, որ ձեռագիրները տարիներով ընկած մնացել են վարչութեան մէջ, պատահել է, նոյն իսկ, որ կորել էլ են։ Պ. Արասխանեան փաստեր բերեց, և այդ փաստերից մէկը, որը վերաբերում էր ժողովականներից մէկին, այն է պ. Մելիք-Շահնազարեանի ուղարկած գրքին, հաստատեց նոյն ինքն ուղարկողը։ Պ. Մալումեան նկատում է, թէ քանի որ վարչութեան անգործունէութեան վերաբերեալ բացի գլխաւոր հարցերից կարող են ծագել ուրիշ շատ հարցեր, ուստի աւելի լաւ է, որ վարչութիւնը եղած հարցերին առանձին առանձին պատասխանի, և հարց է յարուցանում այն մասին, թէ ինչպէս է եղել, որ վարչութիւնը ընդհանուր ժողով հրաւիրած չը լինելով, և նախահաշիւ չունենալով, դիրք է տպագրել։

Վարչութեան ատենապետը սկսում է բացատրութիւններ տալ, և ընկերութեան անգործունէութեան պատճառը համարում է անդամների պակասութիւնը։ Անցեալ տարի ընկերութիւնը ունեցել է 13 անդամ, այսինքն աւելի քիչ, քան թէ վարչութեան և խմբագրութեան անդամները պէտք է լինեն (դրանց թիւը 14 է)։ Վարչութիւնը արել է այնքան, որքան կարողացել է, ասում է վարչութեան ատենապետը, առանց պարզելու այն հանգամանքը, թէ ինչ է եղել պատճառը, որ ընկերութեան անդամները քչացել են, և ընկերութիւնը մոռացութեան է տրվել։

Պ. Գ. Միրզոյեան նկատելով, որ յիրաւի ընկերութիւնը ոչինչ չէ արել, որ նա կատարեալ անգործունէութեան մէջ է ընկել, համարում է այդ մի ապացուցված ու շատ պարզ հարց, որը կարօտ չէ վարչութեան բացատրութիւնների, և անգործունէութեան մէջ մեղաւոր է համարում և հասարակութիւնը, որը կանոնադրութեամբ իրաւունք ունէր ստիպել վարչութեանը՝ ընդհանուր ժողով հրաւիրելու։ Ժողովականներից պ. Գ. Մի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Les Français sont-ils en état de vivre sous le régime parlementaire?— Impartialis.—Librairie Louis Alexander. Paris. (40 Rue Vaneau).

Ֆրանսիացիք կարող են արդեօք ապրել պարլամենտական ըէժիմի տակ,—ահա այն վերնագիրը, որը կրում է Փարիզում այս օրերս հրատարակված և Impartialis (Անկողմնապահ) կեղծ անունով ստորագրված բրոշիւրը։

Քանի մի ժամանակ է արդէն որ այդ հարցը ինքնաբերաբար առաջարկվում է Ֆրանսիայում և անդադար յուզում է ֆրանսիական հասարակական կարծիքը։

Բրոշիւրի հեղինակը ուզեց լուծել այդ հարցը իր փոքրածաւալ գրուածքի մէջ։

Այո, Ֆրանսիան յոգնել է իր պարլամենտական ըէժիմից և սկսում է աւելի և աւելի նախանձով և ակնածութեամբ նայել Ամերիկայի Միացեալ-Նահանգների մեծ հանրապետութեան կառավարական ձևի և պարլամենտական եղանակի վրա։

Ֆրանսիացիք յոգնել են իրանց պարլամենտական կառավարական ձևից, և կեղծանուն հեղինակը ուզեց իր գրուածքով արձագանք տալ իր հայրենակիցների արդար բողոքին իրանց կառավարական ձևի անբաւարար և սխալ կազմակերպութեան դէմ։ Ֆրանսիացիք յոգնել են կառավարական անվերջանալի փոփոխութիւններից. տարի չէ անցնում որ երեք, չորս մինիստրութիւն չը փոխվի....Հաղիւ նոր կազմակերպված մինիստրութիւնը սկսում է երկրի վիճակը ուսումնասիրել և գործ կատարել,—և ահա նա պէտք է հրաժարական տայ և իր տեղը զիջանի մի այլ մինիստրութեան։ Հէնց որ կազմվում է պատգամաւորների ժողովում եղած մինիստրութեան ուղղութեան դէմ մի զգալի մեծամասնութիւն, հէնց որ տեղի է ունենում ազգի ներկայացուցիչների ժողովում մի ձայնատուութիւն, որը հակառակ է մինիստրութեան հայեացքներին,—և մինիստրութիւնը կամայ ակամայ ստիպված է պահանջել պարլամենտից հաւատարութեան ձայնատուութիւն.... Եւ երբ որ այդ ձայնատուութիւնը մինիստրութեան համար անպատեհ է,—մինիստրութիւնը անմիջապէս պէտք է հրաժարվի իր վարած պաշտօնից և նոր մինիստրութիւնը իր տեղը զիջանի։

Իսկ հանրապետութեան նախագահը պատասխանատու չէ ազգային ժողովի առջև։ Մինիստրութիւնն է միայն պատասխանատու պարլամենտի առջև, այն ինչ հանրապետութեան նախագահը մնում է իր տեղում, երբ մինիստրութիւնը անդադար փոխվում է։ Ինքն պարլամենտի առջև պատասխանատու չը լինելով, նախագահը ստիպված է անդադար նոր և նոր մինիստրութիւններ կազմել, որոնք հաղիւ ժամանակ ունեն ծանօթանալ պետական գործերի հետ,—և արդէն իջնում են ասպարիզից, ժամանակ չունենալով գրեթէ ոչինչ գործ կատարելու։

Խիստ քննադատութեան ենթարկելով Ֆրանսիական հանրապետութեան այժմեան կառավարական ձևը և այժմեան սահմանադրութիւնը, կեղծանուն հեղինակը հարկաւոր է համարում աւելացնել, որ ինքն ամենևին կուսակից չէ միապետական կամ անձնական կառավարական ձևի, և այդ պատճառով նա պարտաւորութիւն է համարում դատապարտելի, միջի այլոց, և գեներալ Բուլանժէի ձգտումները, բայց հեղինակի ամբողջ գրուածքից երևում է վերին աստիճանի համակրութիւն դէպի Ամերիկայի Միացեալ-Նահանգների հանրապետական ձևը։ Այնտեղ հանրապետութեան նախագահը, որը ընտրվում է 4 տարով և որը կարող է այդ ժամանակամիջոցից յետոյ նորից վերընտրվել, թէև, ինչպէս և Ֆրանսիական հանրապետութեան նախագահը, պատասխանատու չէ պարլամենտի առջև, բայց պատասխանատու է երկրի քրէական օրէնքի առջև։ Միայն երբ նա որ և է զեղծում է գործում հանրապետական սահմանադրութեան դէմ, նա կարող է հանրապետութեան սենատի դատին ենթարկվել և սենատի 3/4 ձայների մեծամասնութեամբ դատապարտվել ու զրկվել իր պաշտօնից։ Իսկ մինիստրները Ամերիկայում, որոնք նշանակվում են հանրապետութեան նախագահի ձեռքով, թէև սենատի հաւանութեամբ, արձակվում են իրանց պաշտօններից միմիայն հանրապետութեան նախագահի կամքով։ Ուրեմն մինիստրները (կատարող իշխանութեան ներկայացուցիչները) Ամերիկայի հանրապետութեան մէջ, պատասխանատու են ոչ թէ պարլամենտի, այլ նախագահի առջև։ Բացի սրանից, մինիստրներն էլ, նախագահի հետ միասին, ենթակայ են սենատի քրէական իրաւասութեան, օրէնքի դէմ զեղծում գործած լինելու դէպքում։

Ինչպէս տեսնում է ընթերցողը Ամերիկայի Միացեալ-Նահանգների սահմանադրութեան պէս կառավարական ձևը անխախտ պահպանելու համար՝ ազգը պէտք է քաղաքականապէս շատ աւելի զարգացած լինի, ընդունակ լինի հասարակական հաւասարակշռութիւնը պահպանել իր քաղաքական ֆակտորների մէջ, պէտք է քաղա-

քայլեան նպատակայարմար է համարում, որ վարչութիւնը բացատրի իր անգործունէութեան և անաջողութեան պատճառները, որպէս զի պարզվի այն կարևոր հարցը, թէ արդեօք ընկերութեան այս ընկած դրութիւնը այնպիսի հանգամանքների հետևանք է, որոնք չատ ծանրակշիռ են, և ընկերութեան գործող օրգանների ոյժերից վեր, թէ միմիայն դա ընկերութեան գործիչների անձնական յատկութիւնների հետևանք է։

Ընկերութեան ընկած դրութեան վերաբերեալ վիճաբանութիւնները շարունակվում են, և պ. Մալումեան, առաջ բերելով մի շարք փաստեր, որից երևում է, որ ընկերութեան տպագրած գրքերի անաջող ընտրութիւնը վնասել է ընկերութեան անունը, քանի որ այդ գրքերը մեծ մասամբ բաւականութիւն չեն տուել ժողովրդի ժամանակակից ընթերցասիրութեանը, ընկերութեան գործերից քաղած թւանշաններով ցոյց է տալիս, որ Ցպագրական ընկերութիւնը իր գոյութեան ընթացքում քանի գնացել, այնքան ընկել է, նոյն իսկ անդամների թւի կողմից։ Այսպէս օրինակ, 1880 թւին նա ունեցել է 239 անդամ, 1882 թւին՝ 66 անդամ, 1883 թւին 22 անդամ, 1887 թւին 19 անդամ, և վերջապէս 1888 թւին 13 անդամ։ Ընկերութեան անաջողութիւնը պէտք է ընկերութեան վարիչների անտարբերութեան հետևանք համարել, քանի որ հասարակութիւնը միշտ համակրանքով է վերաբերվել դէպի այդ լաւ նպատակ ունեցող հաստատութիւնը և դրա ապացոյց այն էլ կարող է լինել, որ չը կամենալով ընկերութեանը կատարեալ մեռելութեան հասցնել՝ նոյն իսկ մի խումբ մարդկանց ցանկութիւնը բաւական է եղել, որ այդ ընդհանուր ժողովին ներկայ լինի աւելի քան 80 անդամ։ Ժողովականներից ոմանք նկատում են, որ այդ անաջողութիւնը հայոց բոլոր ընկերութիւնների յատկութիւնն է, և որ դրա պատճառն այն է, որ ընկերութեան վարչութիւնները ընտրելիս՝ մարդիկ աւելի խնամութեան զգացմունքով են ղեկավարվում, և թոյլ չեն տալիս, որ օտար և նոր մարդիկ մտնեն գործի մէջ։ Պ. Ս. Չախումեան դժուար համարելով մանրամասնօրէն քննադատելու վարչութեան անցեալ գործունէութիւնը, քանի որ չը կայ տպագրած հաշիւ, առաջարկում է անցնել միւս հարցերին։ Պ.պ. Արաքսանեան և Փ. Վարդանեան նկատելով, որ ընդհանուր ժողովում դժուար է վարչութեան գործունէութեան մանրամասնութիւնները պարզել, առաջարկում են մի յանձնաժողով ընտրել այդ նպատակի համար։

Յանձնաժողով ընտրելու առաջարկը մնաց առաջարկ, այն պատճառով, որ ժողովը չատ պարզված համարեց այն հարցը, թէ ընկերութեան վարիչների անցեալ գործունէութիւնն է եղել պատճառ ընկերութեան այս աստիճանի անկման։

Դրանից յետոյ, վարչութեան ատենապետը երկար ատենաբանութեան դիմելով և մի քանի ելևէջներ անելով, ուզեց համոզել, որ թէ ընկերութեան տպագրած գրքերի ուղղութիւնը լաւ է, և թէ վարչութիւնը իր գործունէութեան մէջ ղեկավարվել է որոշ հայեացքներով։ Այդ ինքն ըստ ինքեան կարևոր հարցերը մնացին առանց պատասխանի, քանի որ փաստերը դրանց հակառակ են խօսում։ Ժողովականներից մէկը, պ. Ց. Տէր-Մարկոսեան նկատեց վարչութեան ատենապետին, որ ընկերութեան անդամների շատութիւնը երկրորդական նշանակութիւն չունի, ինչպէս նա կարծում է, քանի որ անդամների շատութիւնը կարող է լաւ ոյժեր կազմակերպել ընկերութեան համար և կապել ընկերութիւնը հասարակութեան հետ։ Ապա տեղի ունեցաւ 1889 թւի համար վարչութեան կազմած նախահաշիւի ընթերցանութիւնը։ Եւ երևեցաւ, որ նախահաշիւով ընկերութիւնը մուտք սպասում է 1586 րուբլի, իսկ ծախս նշանակել է 1550 րուբլի։

Նախահաշիւի վերաբերմամբ մի քանի նկատողութիւններ արեցին պ.պ. Քալանթար, Զելինսկի և ուրիշները. ի վերջոյ ժողովականներից մէկի առաջարկութեամբ վճռվեց, որ նոր վարչութեանը թողնվի նոր նախահաշիւ կազմել և ներկայացնել ընդհանուր ժողովի հաստատութեանը։

Արդէն երեկոյեան ժամի 11-ից անց էր և այդ պատճառով ժողովականներից շատերը ցանկութիւն յայտնեցին անցնել ընտրութիւններին։ Պէտք է ընտրէին վարչութեան ատենապետ, փոխ-ատենապետ, երկու անդամ, գրագահ և ատենադպիր, և խմբագրական մասնաժողովի եօթը անդամներ։

Այդ երեկոյեան կարելի եղաւ ընտրել միայն վարչութեան ատենապետ և փոխ-ատենապետ։ Ձայների առաւելութեամբ ընտրվեց ատենապետ՝ պ. Փիլիպպոս Վարդանեան 36 ձայնով ընդդէմ 28-ի, և փոխ-ատենապետ՝ բժշկապետ Տէր-Գրիգորեան (Թիֆլիսեցի) 37 ձայնով ընդդէմ 25-ի։

Այդ ընտրութիւնը ընդունվեց ծափահարութեամբ։

Միւս պաշտօնատար անձինքների ընտրութիւնը յետաձգվեց առաջիկայ ընդհանուր ժողովին, որը իբրև շարունակութիւն այդ ընդհանուր ժողովի, պիտի կայանայ մօտ օրերս։

Կէս գիշերից անց էր արդէն, երբ ժողովը փակվեց։

*

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

—

Մարտի 24-ին

Ես ցանկանում եմ այս նամակովս ծանօթացնել յարգելի «Մշակի» ընթերցողներին Մոսկվայի հայ ուսանողութեան հետ։ Աւելի մասնաւորելով իմ նպատակս, ես այստեղ կը խօսեմ առ այժմ միայն այն ուրախալի երևոյթների մասին, որոնք նկատվում են տեղիս ուսանողութեան մէջ։ Նախ՝ այս տարվայ սկզբից մի խումբ հայ ուսանողներ իրանց նպատակ են դրել հիմնաւոր կերպով ուսումնասիրել հայերի դրութիւնը մտաւորական և հասարակական տեսակէտից, գլխաւորապէս Թիւրքիայում, ապա Կովկասում և Պարսկաստանում։ Պէտք է ասել, որ այդ ուսանողներից մի քանիսը մինչև վերջին ժամանակները, նուիրված կօսմօպօլիտական գաղափարներին, բոլորովին չէին հետաքրքրվում ոչ Հայաստանով, ոչ էլ նրա ժողովրդի դրութեամբ։ Դա ժամանակի նշան է, որ այժմ նրանք սկսել են հետաքրքրվել այն հարցերով, որոնց առաջ անտես էին առնում և մենք այդ երիտասարդների նոր ձգտումները ողջունում ենք և ցանկանում ենք նրանց ամենայն աջողութիւն։ Ոչ ոք, ի հարկէ, չի հերքի, որ միայն խոր և բազմակողմանի ուսումնասիրութիւնից յետոյ արդիւնաւոր կարող է լինել այս կամ այն գործունէութիւնը ազգային կամ հասարակական ասպարիզում։ Եւ հիմա նկատելով այդ ցանկութիւնը մեր ուսանողութեան մէջ, մենք կարող ենք ամբողջ սրտից ուրախանալ, որ վերջապէս մեր երիտասարդութիւնը գտել է իսկական ճանապարհը իր ոյժերի օգտաւէտ գործադրութեան համար։ Ինչպէս և միշտ և ամեն տեղ մի նոր գործի սկզբում, այստեղ էլ այդ ձգտումը դեռ նկատվում է միայն չատ աննշան փոքրամասնութեան մէջ, իսկ հայ ուսանողութեան մեծամասնութիւնը մասամբ սառն և անտարբեր կերպով է վերաբերվում դէպի ամեն բարձր և ազգային ձգտում, վատնելով իր ժամանակը զանազան զուարճութիւնների մէջ, մասամբ էլ, սահմանափակ մտաւոր զարգացման պատճառով, նա իր դասախօսութիւններից և մասնաւոր պարապմունքներից դուրս ոչինչ չէ ուզում ճանաչել։ Այդ մեծամասնութեան մասին մանրամասնօրէն կը խօսեմ միւս նամակներիցս մէկում, իսկ հիմա խօսքս փոքրամասնութեան մասին է։ Այդ փոքրամասնութեան մեծագոյն պրօցէնտը կազմում են Պետրոսեան ճեմարանի ուսանողները, որոնք ընդհանրապէս խօսելով, իրանց հասարակական ձգտումների և մտաւոր զարգացման կողմից աւելի բարձր են, քան համալսարանի ուսանողները։ Նրանցից մի քանիսը, հայերէն լաւ չիմացողները, սկսել են սաստիկ եռանդով կարդալ հայերէն թերթեր և առհասարակ պարապել հայերէն լեզուով։

Մի ուրիշ ուրախալի երևոյթ էլ է նկատվում այս տարի տեղիս ուսանողութեան մէջ։ Ցայտնի է թէ հայերը և թէ վրացիք մեր երկրում միմեանց ամենևին չեն ճանաչում, միշտ միմեանց խորթ են մնում։ Նոյն երևոյթը նշմարվում էր միշտ և համալսարանական հայ և վրաց ուսանողութեան մէջ։

Որքան ուրեմն համակրութեան արժանի է այն ձգտումը, որը այս տարի սկսել է նշմարվել հայ և վրաց ուսանողութեան լաւագոյն մասի մէջ։ Բանը նրանումն է, որ մի քանի հայեր ու վրացիք տարվայ սկզբում կազմեցին մի շրջան, որի անդամների թիւը հետզհետէ շատանում է, և որի նպատակն է, կարողութեան չափ, նպաստել այդ ազգութիւնների մէջ համերաշխութեան և բարեկամութեան գաղափարը տարածելու և հաստատելու։ Այդ շրջանի պարապմունքը կը կայանայ հետևեալ կէտերում. 1) նախ ուսումնասիրել ներկայ յարաբերութիւնները երկու հարեւան ազգերի մէջ և սրան համեմատ միջոցներ առաջարկել նրանց մօտեցնելու համար, 2) կարքանիսը մինչև վերջին ժամանակները, նուիրված կօսմօպօլիտական գաղափարներին, բոլորովին չէին հետաքրքրվում ոչ Հայաստանով, ոչ էլ նրա ժողովրդի դրութեամբ։ Դա ժամանակի նշան է, որ այժմ նրանք սկսել են հետաքրքրվել այն հարցերով, որոնց առաջ անտես էին առնում և մենք այդ երիտասարդների նոր ձգտումները ողջունում ենք և ցանկանում ենք նրանց ամենայն աջողութիւն։ Ոչ ոք, ի հարկէ, չի հերքի, որ միայն խոր և բազմակողմանի ուսումնասիրութիւնից յետոյ արդիւնաւոր կարող է լինել այս կամ այն գործունէութիւնը ազգային կամ հասարակական ասպարիզում։ Եւ հիմա նկատելով այդ ցանկութիւնը մեր ուսանողութեան մէջ, մենք կարող ենք ամբողջ սրտից ուրախանալ, որ վերջապէս մեր երիտասարդութիւնը գտել է իսկական ճանապարհը իր ոյժերի օգտաւէտ գործադրութեան համար։ Ինչպէս և միշտ և ամեն տեղ մի նոր գործի սկզբում, այստեղ էլ այդ ձգտումը դեռ նկատվում է միայն չատ աննշան փոքրամասնութեան մէջ, իսկ հայ ուսանողութեան մեծամասնութիւնը մասամբ սառն և անտարբեր կերպով է վերաբերվում դէպի ամեն բարձր և ազգային ձգտում, վատնելով իր ժամանակը զանազան զուարճութիւնների մէջ, մասամբ էլ, սահմանափակ մտաւոր զարգացման պատճառով, նա իր դասախօսութիւններից և մասնաւոր պարապմունքներից դուրս ոչինչ չէ ուզում ճանաչել։ Այդ մեծամասնութեան մասին մանրամասնօրէն կը խօսեմ միւս նամակներիցս մէկում, իսկ հիմա խօսքս փոքրամասնութեան մասին է։ Այդ փոքրամասնութեան մեծագոյն պրօցէնտը կազմում են Պետրոսեան ճեմարանի ուսանողները, որոնք ընդհանրապէս խօսելով, իրանց հասարակական ձգտումների և մտաւոր զարգացման կողմից աւելի բարձր են, քան համալսարանի ուսանողները։ Նրանցից մի քանիսը, հայերէն լաւ չիմացողները, սկսել են սաստիկ եռանդով կարդալ հայերէն թերթեր և առհասարակ պարապել հայերէն լեզուով։

Մի ուրիշ ուրախալի երևոյթ էլ է նկատվում այս տարի տեղիս ուսանողութեան մէջ։ Ցայտնի է թէ հայերը և թէ վրացիք մեր երկրում միմեանց ամենևին չեն ճանաչում, միշտ միմեանց խորթ են մնում։ Նոյն երևոյթը նշմարվում էր միշտ և համալսարանական հայ և վրաց ուսանողութեան մէջ։

Որքան ուրեմն համակրութեան արժանի է այն ձգտումը, որը այս տարի սկսել է նշմարվել հայ և վրաց ուսանողութեան լաւագոյն մասի մէջ։ Բանը նրանումն է, որ մի քանի հայեր ու վրացիք տարվայ սկզբում կազմեցին մի շրջան, որի անդամների թիւը հետզհետէ շատանում է, և որի նպատակն է, կարողութեան չափ, նպաստել այդ ազգութիւնների մէջ համերաշխութեան և բարեկամութեան գաղափարը տարածելու և հաստատելու։ Այդ շրջանի պարապմունքը կը կայանայ հետևեալ կէտերում. 1) նախ ուսումնասիրել ներկայ յարաբերութիւնները երկու հարեւան ազգերի մէջ և սրան համեմատ միջոցներ առաջարկել նրանց մօտեցնելու համար, 2) կարճառօտ կերպով ծանօթանալ միմեանց պատմութեան և գրականութեան պատմութեան նշանաւոր փաստերի և զարգացման կէտերի հետ, 3) մանրամասնօրէն ուսումնասիրել միմեանց ներկայ դրութիւնը թէ տնտեսական, թէ հասարակական և թէ մտաւոր, այսինքն գրականութիւնը, մամուլը և այլն, գրել ռէֆֆերատներ այդ հարցերի մասին և տպել թէ հայոց և թէ վրաց թերթերի մէջ։ Առ այժմ այսքան բաւական եմ համարում յայտնել ի տեղեկութիւն ձեր ընթերցողների, մանրամասնութիւնները թողնելով յետագայ նամակներիս։

Ց. Ռ.

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

—

Մարտի 25-ին

Արդուին հայաբնակ փոքր քաղաքը անցաւ ռուսաց տիրապետութեան տակ 1878 ռուս-թրքական պատերազմներում. մինչև այդ տարին նա չատ ողորմելի ու աննշան դրութիւն ունէր, թէ արտաքին և թէ ներքին կերպարանքով. 10 տարվայ ընթացքում մի քիչ շնորհ ու ձև ստացաւ. ճանապարհներ թէև բացվեցան դէպի Բաթում, սակայն դեռ այնքան չեն կատարելագործված, որ կառքի կամ սայլերի երթևեկութիւն լինի. այդ պատճառով էլ վաճառականութիւնը չատ խղճուկ է և կրիայի քայլերով է առաջ գնում, մի խօսքով քէսատութիւն է տիրում։ Վաճառական դասակարգը մեծ մասամբ սրճարաններում թղթախաղով է օրերը անցկացնում. բայց և այնպէս տեղացի վաճառականները այնքան ճարպիկ կերպով են վարում իրանց գործերը, որ իրօք հրէաները Արդուինին չեն կարողանում մերձենալ, և քանի անգամ որ այստեղ հրէայ է եկել, չուտով ոտք ու ձեռք է քաշել ու յետ դարձել։ Կենսական անհրաժեշտ պիտոյքների թանգութիւնը լինում է այստեղ այն ժամանակ (ապրիլին), երբ Ճորոխ գետը չատ է աճում և կայրքները (նաւակները) նաւազեցնում են իրանց երթևեկութիւնը։

Մանկական մտաւորական զարգացմանն էլ այդ 10 տարվայ միջոցներում են ուշադրութիւն դարձրել. ահա մօտ մի տարի է, որ հայկական ուսումնարանները ծանրաքայլ կերպով իրանց հնադարեան դրութիւնից վերջնականապէս դուրս են եկել և մի փոքր արդեան մեթոդական ընթացք բռնել, բայց դեռ գովելի վիճակ չունեն։ Տեղիս ուսումնարանների մասին «Մշակի» համարներում արդէն բաւական տեղեկութիւններ լոյս են տեսել. այդ թողնենք։

Այս նորաբողբոջ քաղաքի ժողովրդական ընդհանուր շրջաններում չատ անիմանալի և անհասկանալի խնդիր է թւում բեմական ներկայացման նշանակութիւնը։ Ոչոք այդ մասին հոգ չէ տանում, չէ մտածում, չը նայելով որ ժողովրդին մոլեռանդ ախտերից, անշնորհ սովորութիւններից հեռու պահել տուող միակ միջոցն այդ է, նրան զուարճացնելով միանգամայն, նրա պակասութիւնները և վատ կողմերը ճակտին դարկող, կամ նրան մտաւոր պաշարներ տալու մի միջոցն է թէ գոյութիւն ունենան միմեանց մէջ ոչինչ կապ չունեցող, միմեանց հիմնաւորապէս հակասող անթիւ, անհամար քաղաքական կուսակցութիւններ։

—

Եւ ճշմարիտ, մենք տեսնում ենք որ սահմանադրական երկիրներից միայն երեք երկիրներ՝ Ամերիկայի հանրապետութիւնը, Շվեյցարիան և Անգլիան հասել են այդ իդէալին, այսինքն ունեն միմիայն երկու գլխաւոր, որոշ և մեծ քաղաքական կուսակցութիւններ։ Ինչ անուն են կրում այդ կուսակցութիւնները,—դա երկրորդական բան է. դրանք այլ և այլ անուններ են կրում, նայելով երկրի աւանդութիւններին։

Բայց այդ երկու որոշ քաղաքական կուսակցութիւնների գլխաւոր յատկանիշն է, որ նրանցից մէկը կրում է՝ պահպանողական, իսկ միւսը՝ առաջադէմ, կամ ազատամիտ բնաւորութիւն։

Գալով քաղաքական աշխարհի միւս սահմանադրական երկիրներին, նրանցից և ոչ մէկը դեռ չէ հասել այդ իդէալին. Ֆրանսիան ունի քաղաքական անթիւ, անհամար, միմեանց վերաբերմամբ երկպառակութեան մէջ գտնվող, միմեանց հակասող մանր-մունր, ամեն օր նոր ծնվող, ողորմելի, անմիտ կուսակցութիւններ, իսկ Գերմանիան ունի իր պարլամենտում հինգ միմեանց մէջ անհաշտ, միմեանցից կատարելապէս տարբերվող, միմեանց մէջ ոչինչ կոմպրոմիս (պայմանաւորութիւն) անել անընդունակ խոշոր կուսակցութիւններ՝ այն է 1) բուն կառավարչական, 2) պահպանողական ազատամիտ, 3) կղերական յետադէմ, 4) անպայման առաջադէմ և 5) անհաշտ արմատական, չը հաշուելով ուրիշ, մանր, առանձնացած, յիշեալ հինգ խոշոր կուսակցութիւններից ոչ մինին չը յարվող կուսակցութիւններ....

Այդ տեսակ երկիրներ, ի հարկէ, անընդունակ են դեռ ևս բուն պարլամենտական քաղաքական կեանքով ապրելու։

Վերջացնում ենք մեր խօսքը ասելով, որ Փարիզում այս օրերս լոյս տեսած անյայտ հեղինակի դրքոյկը ընդհանրապէս շօշափում է Ֆրանսիայի համար մի շատ այրվող, ժամանակակից քաղաքական խնդիր։

Թէ որ չափով այդ դրքոյկը կարողացել է լուծել իր յարուցած խնդիրը,—այդ մասին դատելը և վճիռ կայացնելը՝ թողնում ենք Ֆրանսիայի ձեռնհաս քաղաքագէտներին։

Գ. Ա.

է. մի խօսքով, մանաւանդ կօմէդիան, դրաման, ժողովրդական կեանքի պատկերներն են, վչտերի սիրտիումը, ընտանեկան կեանքի զարգացումը, իսկ ներկայացումից ստացված արդիւնքը, ի հարկէ, գործ կածվի որ և է մի բարեգործական նպատակով։ Դժբաղդաբար Արդուինում էլ ժողովրդականութիւն ստացած և նրա այլ և այլ խաւերում մարդկութեան բարեւաւութեան սերմեր ցանող, ձգտումներ մշակող մի անձնուէր անհատ հաղւագիւտ է։

Մի քանի տարի սրանից առաջ Արդուինում ծառայութեան մէջ գտնվող օտարերկրացի անձերից բաղկացած թատերասէրների մի խումբ տուել է մի ներկայացում, որ, փոխանակ արդիւնք ստանալու, իւրաքանչիւրը զուտ 10—20 ռուբլուց էլ աւելի գումար գրպանից է ծախսել։ —ասենք թէ արդուինցիք չեն սիրում փող ծախսել այդ տեսակ զուարճանոցներում,—ոչ, նրանք մեծ ուրախութեամբ և խմբով դիմում և ներկայ են լինում ամօթալի, խայտառակ և անբարոյական կարագեօղ կոչված սպիտակ վարագոյրի ետև մի տեսակ խրտուիլակներով ներկայացված անպիտան խաղին. ասենք, փող շատ են մսխում (ինչպէս ուրիշ քաղաքներում) այլ և այլ հասարակաց զուարճանոցներում,—ոչ, որովհետև այստեղ ոչ պարահանդէսներ են պատահում, ոչ հիւրանոցներ կան (բացի մի քանի խարխուլ հնաշէն սրճարաններից), ոչ օպէրաներ, կոնցէրտներ, վիճակախաղեր, ցիրկեր, և այլն։ Բարեկենդանը անցաւ խորին լռութեամբ. մէկ օրհնած ասիական դավուլ-զուռնա անդամ չը կայ։ Բարեկենդանում առհասարակ իգական սեռի համար, զուարճութեան առաջին առարկան է ճլորդի կամ չուան խաղալը, իսկ երիտասարդների համար օճօվարին։ Մեծ-պասը աւելի քնած, տրխուր է անցկենում. մեծ-պասում եթէ լսվի որ և է նուագարանի կամ երգերի ձայն, իսկոյն լըսում ես. «Վայ իմ մեղքիս, վայ իմ գլխիս, մեծ պաս է, մեղքէ, վայ... և այլն»։ Հապա եթէ լսէին մեր «վայ» գոչողները, թէ աշխարհում ամբողջ նուագածու և երգիչ խմբեր իրանց արհեստով են ապրում, հազարաւոր կօնցերտներ, երաժշտութիւններ են հնչեցնում, կարծում եմ թէ ողջ-ողջը-ժոխքում պիտի կարծէին իրանց....

Վերջապէս այս օրերս կազմվում է թատերասէրների մի նոր խումբ Զատկին ներկայացում տալու համար, որոնք աչքի առաջ ունենալով անցեալ տարիներում պատահած, ինչպէս վերև ասեցինք, փոխանակ արդիւնքի՝ կորուստը, շատ վհատութեամբ են վերաբերվում իրանց ցանկութիւն իրագործելուն. և նրանց ինչ մեղքին տալու է. բացի ժողովրդի սառնասրտութեամբ վարվելուց, ներկայացման յարմար տեղ էլ չը կայ. թէև մէկ երկու առանց ապակիի բաց լուսամուտներով դահլիճ ունեցող պարապ տներ գըտնվում են, սակայն նրանց տէրերն էլ թատրոնի ձայնն իմանալիս ականջներն են խցում—մերժում. լաւ են համարում վարձու տալ կաբադէօղ խաղցնողներին 2—3 ռուբլով մի երեկոյի համար, քանց ստանալ թատրոնի երեկոյից կրկնապատիկ և աւելի ևս վարձ։ Ահա թէ ինչ է պատասխանել մի դատարկ տան տիկինը մեր երիտասարդ թատերասէրներին. «Մեր տունը խօ ցիրկ չէ ու. եթմիշու երկուս ու կէս միլլէթ տի մտնեն տունը ու... թէ օրէնա թէատրօ տի խաղաք, գնացէք բիթունքդ ձեր տներում խաղացէք....»

Խնդրում ենք մասնաւորապէս մամուլի ուշադրութիւնը և աջակցութիւնը այս կողմերի հայ ժողովրդի մէջ տարածելու՝ բեմի նշանակութիւնը և նպատակը։

Զ. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս բոպէիս ստացանք ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հետեւեալ բօթաբեր հեռագիրը. «Պրոֆէսօր Քերովբէ Պատկանեան, երկար և ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց ապրիլի 2-ին, երեկոյեան։»

—

«Մշակի» ներկայ համարից յետոյ կը հրատարակենք դարձեալ մի համար (№ 40) հինգշաբթի, ապրիլի 6-ին, և ապա, Զատկի տօների պատճառով, ինչպէս անում էինք ամեն տարի, կընդմիջենք մեր լրագրի հրատարակութիւնը մինչև միւս հինգշաբթի։ Ուրեմն «Մշակի» № 41 կը հրատարակենք հինգշաբթի, ապրիլի 13-ին։ Այնուհետև լրագրի համարների լոյս տեսնելը կը շարունակվի սովորական կարգով։

—

Մեզ գրում են Հին-Նախիջևանի գաւառի Ջահուկ գիւղից, որ մարտի 4-ից սկսած մինչև նոյն ամսի 6-ը այդ կողմերում առատ անձրև էր գալիս, այնպէս որ գիշերվանից Ջահուկ գետը սկսեց բարձրանալ, դուրս գալ իր ափերից և ողողեց ու տիղմով ծածկեց իր երկու կողմ գտնվող թէ այգիները, թէ տները և թէ ցորենի արտերը։ Մարտի 7-ին առաւօտեան մի քանի թուրք ձիաւորներ կամենալով գետի այն կողմն անցնել, իրանց գիւղը գնալու համար, անկարող եղան գետի կատաղի հոսանքին դիմանալ և եթէ Ջահուկ գիւղի հայերը վրա չը հասնէին, ձիաւորները բոլորն էլ կը խեղդվէին գետի ալիքների մէջ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ տիկին Եղիսաբէթ Եղիազարեանցի ձեռքով ստացանք 29 ռուբլի, որ տիկինը հաւաքել է հանգանակութեամբ հինդ անձանց մէջ, ինքն էլ մասնակցելով այդ հանգանակութեան։ Այդ գումարից 20 ռուբլի նուիրատուները յատկացնում են հանդուցեալ Բաֆֆիի մահարձանի շինութեան, իսկ 9 ռուբլի Բաֆֆիի գրուածների տպագրութեան գործին։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ պ. Եղ. Մաղաթեանից ստացանք 10 ռուբլի յօգուտ Բաֆֆիի գրուածների հրատարակման։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ տեղեկացնում են, որ մարտի 25-ին այդտեղ կայացաւ ուսումնարանների հոգաբարձական ընտրութիւնը։ Հոգաբարձու ընտրվեցան՝ Ա. Երեցփոխեանց, Զ. Առվանեանց, Գ. Շահպարոնեանց և Ա. Գրիգորեանց։ Մեր թղթակիցը շատ աջող է համարում ընտրութիւնը և աւելացնում է թէ հասարակութիւնը հաւատացած է որ նորընտիր հոգաբարձուները իրանց եռանդոտ գործունէութեամբ և ուսումնարանական գործի առաջադիմութեան անձնուէր լինելով՝ կարդարացնեն հասարակութեան կողմից իրանց վրա դրված յոյսը։

—

Արտասահմանի մեր բարեկամներից մէկը խընդրում է մեզ տպել հետեւեալ նկատողութիւնը. «Ես կուզէի մի առաջարկութիւն անել Բաֆֆիի աշխատութիւնների հրատարակութեան ձևի մասին։ Որքան յիշում եմ այդպիսի առաջարկութիւն հրապարակապէս չէ արված, այն ինչ, իմ կարծիքով, նա միանգամայն յարմարագոյն է և ցանկալի։ Ահա առաջարկութիւնս. Բաֆֆիի բոլոր աշխատութիւնները՝ թէ տպագրված և թէ անտիպ, թէ տպառված և թէ ոչ տպառված, պէտք է հրատարակել միասին (թէկն գուցէ փոքր առ փոքր) իբրև «Հեղինակութիւնների լիակատար ժողովածու» (Полное собраніе сочиненій), ժողովրդական հրատարակութեան ձևով (народное изданіе), այսինքն երկու կամ երեք մեծադիր, իւրաքանչիւր երեսը երկու սիւնակից բաղկացած հատորներով, հասարակ թղթի վրա տպված և կարելին չափ ընթերցող հասարակութեան մեծամասնութեան և ոչ թէ ունևոր շրջանների համար մատչելի գնով։ Այդպիսի հրատարակութիւնը թէ միանգամայն Բաֆֆիի գրուածները աւելի կարդացնել կը տայ, նպաստելով նրանց տարածմանը հայ ընթերցող ամեն տեսակ շրջաններում, և թէ իր մատչելի գնի շնորհով աւելի էլ ծախվելով՝ նիւթապէս կօգնէ հեղինակի որբերին։ Մի խօսքով, ցանկալի է որ Պուշկինի, Գոգոլ Ռոսպէնսկու և ուրիշ ռուսաց գրողների աշխատութիւնների ժողովրդական հրատարակութիւնների ձևով հրատարակվեն և Բաֆֆիի գրուածները։ Ցանկալի է որ ձեր լրագիրը պնդէր այդ առաջարկութեան վրա, որը իմ կարծիքով շատ կարևոր է։»

—

ԹԷԼԱՒԻՑ մեզ գրում են, որ մարտի 25-ին, առաւօտեան 5 ժամին, այդտեղ զգալի եղան երկրաշարժի մի քանի զօրեղ հարուածներ, որոնք, սակայն վնաս տուած չեն քաղաքի շինութիւններին։

—

Ինչպէս մեզ գրում են, ԹԷԼԱՒՈՒՄ այս բոպէիս սաստիկ տարածված է բկացաւ ասված հիւանդութիւնը երկու սեռի մանուկների մէջ։ Հիւանդ աշակերտները արձակված են ուսումնարաններից։ Բարեբաղդաբար, ասում է մեր թղթակիցը, հիւանդութիւնից առաջացած մահվան դէպքերը շատ սակաւ են։

—

«Тифл. Листокъ» լրագրում կարդում ենք, որ Էջմիածնի հայոց ս. Սինոդի պրօկուրոր նշանակված է պ. Իւզբաշեան, որը վերջին ամիսները արդէն կատարում էր ժամանակաւորապէս նոյն պաշտօնը։ Դրանից առաջ պ. Իւզբաշեան անդամ էր Երևանեան նահանգի կալուածական-գիւղական առեանի։

—

Մեզ գրում են, որ մարտի 5-ին Ջահուկ գիւղից երկու վերստ հեռու գտնվող Խալխալու հայաբնակ գիւղի գերեզմաններից հինգ գերեզման քանդված են գտել։ Այդ գերեզմաններից գողացված են երկու աղջիկների դիակներ, իսկ երեք դիակներ, հանված լինելով գերեզմաններից, գցված են մօտակայ տեղերում։ Դիակներից մէկը գիւղի քահանայի աղջկայ դիակն է։ Կասկածում են որ այդ յանցանքը կատարել են շրջակայ թուրք գիւղերի բնակիչները, որոնք Խալխալու հայ գիւղի բնակիչների ոխերիմ թշնամիներ են։

—

Ապրիլի 1-ից մինչև ապրիլի 16 հետեւեալ տակսա է նշանակված ԹԻՖԼԻՍԻ առաջին հարկաւորութեան կենսական պիտոյքների վրա։ Կրուպչատկա ալիւրից թխած հացի ֆունտը արժէ 5 կօպէկ, ցորենի ալիւրից, առաջին տեսակի՝ $3^1/_2$ կ., երկրորդ տեսակի՝ 3 կ., տեղական թոնրի մէջ նոյն ալիւրից թխած հացի ֆունտը, առաջին տեսակի՝ 5 կ., երկրորդ տեսակի՝ 4 կ., երրորդ տեսակի՝ $3^1/_2$ կ., կրուպչատկա ալիւրից, խառն ցորենի ալիւրի հետ թխած լաւաշները արժեն. առաջին տեսակի՝ ֆունտը 5 կ., երկրորդ տեսակի՝ 4 կօպէկ։ Ցաւարի մսի ֆունտը, առաջին տեսակի արժէ 9 կ., երկրորդ տեսակի՝ 8 կ., սուկի 16 կ., ոչխարի մսի ֆունտը՝ 12 կօպէկ։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Մինչև այժմ անտանելի վատ եղանակներ ունէինք, ցեխը անանցնելի էր քաղաքիս փողոցներում։ Մի քանի օր է միայն որ դարնանային գեղեցիկ օրեր ենք տեսնում։ Այլ և այլ տարափոխիկ հիւանդութիւններ են տարածված քաղաքում, մանաւանդ դիֆտէրիտը սարսափելի շատ զոհեր է տանում չքաւոր դասակարգի երեխաներից։ Առուտուրը Եկատերինօդարում կատարելապէս ընկած է և մթերքները շատ թանգ են վաճառվում։ Մարտ ամսին տեղի ունեցած տօնավաճառը անաջող էր. տօնավաճառը գնացած վաճառականները, համարեա առանց բացառութեան, ապրանքները չը ծախած վերադարձան քաղաք։»

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Թեմիս առաջնորդի կարգադրութեամբ, մարտի 26-ին երկսեռ ծխական դպրոցի դահլիճում կատարվեց հոգաբարձական ընտրութիւնը։ Նախկին հոգաբարձուներից ոչ մէկը չընտրվեց, այլ ընտրվեցան հետեւեալ անձինք. Վարդան Պապեանց (տեղիս Մարիինսկի ինստիտուտի թուաբանութեան ուսուցիչ), Մկրտիչ Սըրմաքեշեանց (բժիշկ), և չորս վաճառականներ՝ Սարգիս Խարագելեանց, Պողոս Բեգրոսեանց, Խաչատուր Թոփալեանց և Յարութիւն Յարութիւնեանց։ Ժողովուրդը շատ գոհ է այս ընտրութեամբ։»

—

Թէ որքան է պահանջվում Կ. Պոլսի ազգային ժողովում կարծիք յայտնելու ազատութիւնը, և թէ որքան հասկացողութիւն ունեն ճռճռան ճառեր խօսող երեսփոխանները խօսքի ազատութեան մասին, այդ երևում է դէթ մասամբ հետեւեալ տողերից, որ պ. Կ. Իւթիւճեան տպագրել է Կ. Պոլսի «Արևելք» լրագրում. «Ազգ. ժողովոյ երեկեան նստին նկարագրին մէջ պիտի յիշուի անշուշտ թէ վիճաբանութեան առիթ եղող խնդրոյն վրայ ես ալ՝ իբրև երեսփոխան կարծիք մը յայտնելու համար՝ բաւական դժուարութեամբ բեմն ելնելով քանի մը խօսք ընելէ յետոյ՝ հարկադրեցայ վար իջնել՝ առանց կարենալ շարունակելու և մտադրեալ եզրակացութեան յանգելու։ Ստենտորեան հուժկու շնչափողերով զինեալ մի քանի երեսփոխանք, հինգ կամ վեց, կանխաւ միաբանած և վարժութիւն իսկ ըրած լինել կը թուէին, որպէս զի մի և նոյն եղանակի վրայ պարերգաբար աղաղակ բառնալով խեղդէին իրենց համակարծիք չեղող կամ չը համարուող երեսփոխանաց խօսքերն։ Ցիշեալ պատուական երեսփոխաններուն ընծայած տեսարանը կրնար շատ զուարճալի լինել կատակերգական թատերաբեմի մը վրայ, բայց ազգային ժողովոյ մը մէջ, ուր ազգին կենսական խնդիրները կը յուզուին, կարի տխուր և անհաճոյ էր։ Իմ ձայնս, արդէն զօրեղ չը լինելով, չէր կրնար տակալ այն ահեղագոչ ժխորին, որ փոքր ի շատէ գձուձ թշնամանօք իսկ համեմեալ էր, և զգուանք ու վհատութիւն միանգամայն զգալով վար իջայ բեմէն ի մեծ գոհութիւն խազմարար խմբակին։ Կը կրկնեմ, կարի տխուր է այս վիճակ և կարի անհամաձայն արժանապատուութեան Ազգային Ժողովոյ, յորում այսպէս կը ճնշուին ու կը բռնաբարուին համեստաբար կարծիք յայտնելու իրաւունք և ազատութիւն, և յորում քանի մ'անձանց բուռն կիրքը կը տիրապետէ յաղթապանծ»։

—

Ապրիլի 2-ին, կիրակի օր, Ֆրանսիական օպէրետային խումբը տուեց ԹԻՖԼԻՍԻ քաղաքային թատրոնում իր վերջին ներկայացումը տօներից առաջ։ Խաղացին «La fille de madame Angot» և Նինիշ օպէրետները։ Թատրոնը կատարելապէս լի էր։ Զատկի կիրակիից նորից կը սկսվեն ներկայացումները և շաբաթվայ ընթացքում օրը երկու անգամ կը տրվեն։ Էպէրետուարի մէջ յայտնված են, ի միջի այլոց, երեք հատ նոր օպերէտներ. «Լիլի», «Թէյի ծաղիկը» և «Պէրիկօլա»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Այսօր, ամսիս 2-ին, տղայոց դպրոցում կայացաւ երկսեռ դպրոցների հոգաբարձական ընտրութիւնը։ Ընտրութեան մասնակցում էին միմիայն Ս. Յովհաննէս եկեղեցու ծխականները. ուրիշ ծխականներից թէև ներկայ էին, բայց չէին մասնակցում. այդպէս էր կարգադրված։ Ընտրութիւնը կատարվեց 30 հոգով. հարիւրաւոր ծխականներից 30 հոգի էին ժողովվել միայն. որքան մեծ անտարբերութիւն։ Քուէարկութիւնը տեղի ունեցաւ գաղտնի կերպով. իւրաքանչիւր ծխական՝ մէկ հոգևորական և երեք աշխարհական ընտրելու իրաւունքով, նշանակեց իր չորս թեկնածուների անունները՝ նախօրէն բաժանած թերթիկներում, որոնցից քուէների առաւելութեամբ ընտրվեցան հետեւալները՝ Գրիգոր քահանայ Բաբաքեխեանց, պ.պ. Նաբաթեան (երեցփոխ), ինժէներ Մարգարեան և պ. Լիսիկեան։ Ընտրութիւնը բաւական աջող է համարվում. ժողովներում գործադրվող խնամութեան վրա դաղափար կազմելու համար, հարկաւոր է միայն հետեւեալը յիշատակել. ժողովականներից մէկը թերթիկում նշանակել էր նախ իր հօր անունը, յետոյ անուրանելի, ապա միւս ազգականներինը.... Մնում է ցանկանալ, որ նորընտիր հոգաբարձութիւնը արդարացնէ իր վրա դրած յոյսը, որ ունեն ընտրողները դէպի նրանց յատկութիւնը»։

—

Քաղաքում լուր է պատում, որ Բագուից վերջին օրերում մեծ քանակութեամբ փչացած ձուկ է բերվում Թիֆլիս վաճառելու համար, քանի որ Բագումում այժմ ձկնի առատուր համարեա չէ լինում, այնտեղ պատահած թունաւորութեան դէպքերի պատճառով։ Եթէ ճիշդ է այդ լուրը, այն ժամանակ անհասկանալի է, թէ ինչու ոչոք ուշադրութիւն չէ դարձնում, որպէս զի մեր վաճառատներին միանգամայն արգելվի այդ տեսակ փչացած ձկների վաճառելը։ Առանց այն էլ Թիֆլիսի շուկաներում վաճառվող ամեն տեսակ անպէտք մթերքները բաւական են ժողովրդին, մանաւանդ չքաւոր դասակարգին, շատ տեսակ հիւանդութիւններ շնորհելու....

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԻՐԱՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ

—

Սրանից մի քանի ժամանակ առաջ, երբ Ֆլոկէի մինիստրութիւնը հրաժարվելուց յետոյ, ֆրանսիական հանրապետութեան նախագահը այս և այն քաղաքական նշանաւոր գործիչին դիմելով, չէր կարողանում կազմել նոր մինիստրութիւն, և երբ հազիւ հազ,—ինչպէս ասում էին Փարիզի մի քանի շրջաններում,—կարելի եղաւ դէսից-դէնից հաւաքել և կազմել այժմեան մինիստրութիւնը՝ Տիրարի նախագահութեամբ, ամենքը այն կարծիքի էին, որ այդ մինիստրութիւնը երկար կեանք չի ունենայ, և եթէ ունենայ էլ, շատ անգոյն և աննշան մի բան կը լինի։ Փարիզի քաղաքական շրջաններում այն կարծիքի էին, որ Տիրարի մինիստրութիւնը քաղաքական դեր չէ կարող կատարել, չէ կարող շարունակել այն ընթացքը, որով սկսել էր գնալ Ֆլոկէի մինիստրութիւնը, և այդ պատճառով այդ

մինիստրությունը անուանեցին «ցուցահանդիսի մինիստրություն», կամենալով դրանով ասել, որ այժմեան մինիստրության ոյժերը հազիւ կը ներ-ին հոդալ համաշխարհային ցուցահանդիսի կազմակերպության մասին:

Այդ դեռ քիչ է. անուանելով այժմեան մինիստրությունը «ցուցահանդիսի մինիստրություն», հասարակաց կարծիքը ենթադրում էր, որ Տիրարի իր խմբով անմիջապէս պէտք է հեռանայ ասպարիզից, հէնց որ ցուցահանդիսի գործերը աւարտած կը լինեն: Սակայն այժմ կարծիքները փոխվում են: Բուլանժէ, այդ արկածախնդիր հերոսը, որը պէտք է ամենամեծ դժուարության մէջ գցէր մինիստրությունը, մեծ մասամբ և պատճառ եղաւ նրա անուան բարձրանալուն, և մինչև անգամ մի յայտնի աստիճանի ժողովրդականություն չնորհեց այդ մինիստրության:

Ընթերցողը արդէն գիտէ Բուլանժէի վերջին դժբաղդությունը.—նա Փարիզից փախել է Բելգիա. Բելգիայում էլ հարց է յարուցանվում նրան այնտեղից դուրս քշելու մասին, և այդպիսով տխուր հռչակ ստացած գեներալը երկու կրակի մէջ է գտնվում: Հանրապետական կառավարությունը արդէն չոչափելի կերպով յայտնակը իր կողմն է գցել, և կարողացել է բաւական ազդեցիկ դեր կատարել, նեղ դրության մէջ գցելով նրանց, որոնք հանրապետության ոսների տակ փոս էին փորում, և որոնք «հայրենիք» և «աղատություն» բառերով միայն ծածկել էին ուզում իրանց իսկական և բաղդախնդրական ձգտումները՝ հասնելու իշխանության և փառքի:

Կարելի է ասել, որ Տիրարի մինիստրության այդ աջողությանը բաւական նպաստեց և Փարիզի ցուցահանդիսի աջողության տենչանքը, որով լցված է իւրաքանչիւր ֆրանսիացու՝ սիրտը: Այդ ցուցահանդէսը նորից պէտք է ցոյց տայ աշխարհի ամեն կողմերից Փարիզ եկող միլիոնաւոր մարդկանց, թէ՝ որպիսի մտաւոր և նիւթական մեծ ոյժ է պարունակում Ֆրանսիան,—և ահա այդ միտքը ուրախությամբ է լցնում ամեն ֆրանսիացու սիրտը, չարժելով նրա հայրենասիրական թելերը, ազդելով նրա ինքնասիրության վրա: Իսկ նիւթական օգուտը, որ ամենքը այդ երկրում սպասում են ցուցահանդիսից, զրզռում է նոյն իսկ ամբոխին չը խանգարել այն պատրաստությունները, որոնք պիտի նպաստեն ցուցահանդիսի աջողությանը:

Եւ ահա այդ քաղաքական և տնտեսական գուցէ և պատահական հանգամանքներն են, որ աջողություն են տալիս մի այնպիսի մինիստրական խմբի, որպիսին է Տիրարի մինիստրությունը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզից հեռագրում են, որ կառավարությունը կարգադրություն է արել, որ հէնց որ գեներալ Բուլանժէ Նորից ոտք կը դնի Ֆրանսիական հողի վրա, ոստիկանությունը պէտք է նրան կալանաւորի: Եթէ հաստատ է այդ կարգադրությունը, անկասկած Բուլանժէ երկար ժամանակ դեռ կը մնայ Բելգիայում:

—Բրիւսելից հեռագրում են, որ այնտեղ վերջին օրերում հաւաքվում են մեծ բազմությամբ բանւորներ: Ենթադրում են որ դրանց նպատակն է ցոյցեր անել Բուլանժէի դէմ:

—Վիէննայից հեռագրում են, որ բոլգարական կառավարությունը փոխառություն է ուզում անել Վիէննայում:

—Սոֆիայից գրում են հետևեալը: Այս օրերս բոլգարական գործիչ Ցանկով պատասխանելով իր բարեկամների հրաւէրին, որով նրան հրաւիրում են Բոլգարիա գալ, յայտնել է, որ ինքը Բոլգարիա չի վերադառնայ, քանի որ երկրի վիճակը այժմեան կառավարության ձեռքումն է: Ցանկով դրա հետ միասին համբերություն է ցանկանում իր բարեկամներին, երևի համոզված լինելով, որ Բոլգարիայի այժմեան կառավարությունը երկար կեանք կունենայ:

—Բրիւսելից հեռագրում են, որ այնտեղի ֆրանսիական դեսպանը բանակցություններ է ըսկսել Բելգիայի կառավարության հետ՝ Բուլանժէին ֆրանսիական կառավարության ձեռքը տալու համար:

—Բուխարեստի Ֆոկշան քաղաքից «Արևելք» լրագրին գրում են. «Ֆոկշանի հայերը ներկայիս մէջ ունին նորակառոյց երկու վարժարաններ ընդարձակ և գեղեցիկ, իւրաքանչիւրն երկու դասարաններով և մէկ ուսումնասրահով: Վարժարաններէն մին նուիրեալ է Սուրբ Ղևոնդեանց յիշատակին և միւսն Սուրբ Հռիփսիմեանց: Երկսեռ ուսանողաց թիւն առ այժմ 40—45-էն վեր չանցնիր, որը կուսանին Ռումաներէն, Գաղիերէն, Հայերէն լեզուներ. ռումանական լեզուաւ կուսանին նաև կրօն, պատմություն, աշխարհագրություն, թուաբանություն, սկզբունք երկրաչափության, բնագիտության և գեղագրություն, իսկ դաշնակի դասն օրիորդաց յատուկ է: Ճշմարտության ու խղճի դէմ մեղանչած չը լինելու համար պէտք է հրապարակաւ խոստովանիլ թէ երկու վարժարանաց մէջ ևս բացարձակապէս տիրող լեզուն ռումաներէնն է, որ մայրենի լեզուն է ուսանողաց և ուսանողուհեաց. ասա ամենատխուր տպաւորության մը ներքև պէտք է ըսել նաև որ 20—25 աշխոյժ հայ ուսանողք կը յաճախեն ռումանական վարժարանները, զուրկ բոլորովին մայրենի լեզուէն և հետևաբար ազդ. զգացումներէ, երբ անուրանալի է թէ լեզուն զգացմանց հետ սերտ առընչություն ունի»:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մարտի: Ժամանակաւոր կառավարությունը հաղորդակցության ճանապարհների մինիստրության յանձնված է սատատ-սեկրետար Գիւբբէնէտին: Լրագիրները մի քանի անձանց անուններ են տալիս, որոնք հաղորդակցության ճանապարհների մինիստրի պաշտօնի համար կանդիդատներ են համարվում, ի միջի այլոց յիշվում են հետևեալ անունները. գեներալներ՝ Անենկով, Բոբրիկով, Շիլլո և Պետրով: Բայց հաստատապէս դեռ ևս ոչինչ յայտնի չէ: Հանգուցեալ մինիստր Պաուկէրի թաղումը տեղի կունենայ երկուշաբթի օրը:

ՄՈՍԿՎԱ, 31 մարտի: «Моск. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Միխայիլ միտրոպոլիտը Զատկից յետոյ Բելգրադ է ուղեորվում:

ՓԱՐԻԶ, 31 մարտի: Պատգամաւորների ժողովի նիստերը յետաձգված են մինչև 14 մայիսի:

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 31 մարտի: Պատգամաւորների ժողովի այսօրվայ նիստում Կատարջի ասել է որ չէզոքությունը դարձել է նշանաբան այժմեան կառավարության և որ ռուսահպատակներին երկրից արտաքսելու հարցի վերաբերմամբ կառավարությունը քննություն կը նշանակէ՝ արդեօք օրինական հիմունքների վրա էր արած յիշեալ կարգադրությունը, թէ ոչ: Մի պահպանողական նոր մինիստրություն կազմելը, Կատարջիի զեկավարությամբ, արդարացվում է այն տեսակէտից, որ այդ տեսակ մինիստրության գոյությունը պահանջում էին պարլամենտական և ներքին քաղաքականության յայտնի հանգամանքները, որոնք սակայն չեն կարող որ և է ներգործություն ունենալ երկրի յարաբերությունների վրա դէպի օտար պետությունները:

ՓԱՐԻԶ, 31 մարտի: Այսօր առաւօտեան սենատը ընտրեց բարձրագոյն դատարանի քննիչ յանձնաժողովը: Մինիստրներից ոչ ոք չը մասնակցեց յանձնաժողովի ընտրությանն: Դէնբրաէլ սենատորը յայտնեց որ չէ ճանաչում քաղաքական ժողովի իրաւունքը՝ ազգի ներկայացուցչին դատելու:

ՀՌՈՄ, 31 մարտի: Ենթադրում են, որ Աբիսինիայում ներքին պատերազմ կը ծագէ գահաժառանգության համար:

ՓԱՐԻԶ, 31 մարտի: Սենատը լսեց այսօր պրոկուրորի մեղադրական ճառը Բուլանժէի, Դիլիոնի և Բոչֆորի դէմ, և ապա կազմակերպեց մի գաղտնի մասնաժողով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 ապրիլի: Պետերբուրգի բորսա. Թիֆլիսի և Քութայիսի կալուածական բանկերի գրաւական թղթերը արժեն 97 բուբլի 25 կոպէկ:

ՄՈՍԿՎԱ, 1 ապրիլի: «Ռուսաց առևտրական նաւագնացությանը նպաստող» ընկերության երէկվայ նիստում Շուլատիկով կարդաց Աստրախանի, Բաքուի և Նիժնի-Նովգորոդի բորսային մասնաժողովների զեկուցումները, որոնք ապացուցանում են Բաքու-Բաթումեան նաւթանցքի վնասակարությունը: Ընկերությունը որոշեց. առանց քննելու հարցի էությունը, պաշտպանել բորսային մասնաժողովների զեկուցումները:

ԲԱԼԱ-ԻՇԷՄ, 1 ապրիլի: Անդրկասպեան երկաթուղու կառուցանողի ձեռքով 1885 թուին Նաւթային ասված սարի վրա փորված նաւթային հորերում՝ յայտնվեց այժմ նաւթ նշանաւոր քանակությամբ:

ՓԱՐԻԶ, 1 ապրիլի: Սենատը ընդունեց հաճարի և հաճարի ալիւրի վրա մաքս բարձրացնելու մասին օրինագիծը: Սենատը վճռեց ձեռնամուխ լինել Բուլանժէի մասին գործի քննության:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 ապրիլի: «Правит. Вѣстникъ» լրագրի մէջ այսօր հրատարակված են ֆրանսիական յայտնի պաշտօնական զեկումենտները, որոնք վերաբերում են Աշինովի գործին, և բացի դրանից քաղուածքներ Կայիրէի մեր փոխ-հիւպատոս Իվանովի տեղեկագրից, որը նա ուղղել է Եգիպտոսի դիպլոմատիական գործակալին, որը ուղարկված է Սուէզ՝ ներկայ լինելու Աշինովի և նրա ընկերների «Զաբիակա» նաւի վրա տեղափոխվելուն:

ՁԱՐՁՈՒ, 1 ապրիլի: Գեներալ Բոգենբախի կարկի գնալը բաւական հանգստացրեց բուխարացիներին. ոչ Աբդուրահմանի յարձակողական դիրքի և ոչ էլ Զարվիլաէտի տիրապետության մասին խօսք էլ չէ կարող լինել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի: Երէկ Բուխարայի դեսպանությունը վերադարձաւ դէպի Բուխարա: «День» լրագիրը հաղորդում է, որ լուրերին նայելով, ենթադրություն կայ գարնանը առողջապահական նոր կանոններ հաստատել մեր արդիւնաբերական հիմնարկությունների համար:

ՅԱՐԻՑԻՆ, 2 ապրիլի: Վոլգայի սառուցը հալվեց:

ԲԵԼԳՐԱԴ, 2 ապրիլի: Այսօր հանդիսաւոր ունկնդրության ժամանակ Ռուսաստանի ներկայացուցիչը յանձնեց իր հաւատարմագրերը խնամակալներին:

ՓԱՐԻԶ, 2 ապրիլի: Սենատի նիստերը յետաձգված են մինչև մայիսի 14-ը: Քննիչ յանձնաժողովը մի ամսից առաջ չի աւարտի իրան յանձնած գործը:

ԼՎՈՎ, 2 ապրիլի: Սէյմի առաջիկայ ընտրությունների առիթով Գալիցիայի ռուսինները քարոզում են, որ իրանք չը պէտք է մասնակցեն ընտրություններին, ի նկատի ունենալով տիրապետող հանգամանքները: Այդ բանը պահանջում է ազգային արժանապատվությունը:

ՓԱՐԻԶ, 3 ապրիլի: Պատգամաւորների ժողովի աջակողմեանների դաշնակցության բարձրագոյն դատարան հիմնելու դէմ բողոքի մէջ ասված է. «դատ սկսելու պատճառը սենատի դէլէգացիան էր. չը լսված բան է որ լրտեսները դատաւորներ դառնան: Դաշնակցությունը չէ ընդունում մի այդպիսի բացառական իրաւասություն, որը ըստառնում է ժողովրդական կամքի ազատօրէն յայտնվելուն:—Բուլանժեականների գործը 14 հատորներից է բաղկացած, որոնց վրա գիշեր և ցերեկ հսկում են սուիններով զինուորները:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Մարտի 31-ին

Լծդօնի վրա 10 ֆունտ արժէ— . .	93 ր.	70	›
Բերլինի վրա 100 մարկ — . .	45 ›	75	›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 ›	—	›
Ոսկի — արժէ — . .	7 ›	45	›
Մաքսային կուպօններ — . .	149 ›	—	›
Արծաթ — — — . .	1 ›	12	›
Բորսային զիսկօնտներ — .	5¼ և	6½%	›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 ›	—	›
— — — — 2-րդ —	98 ›	87	›
— — — — 3-րդ —	98 ›	87	›
— — — — 4-րդ —	98 ›	87	›
— — — — 5-րդ —	98 ›	87	›
— — — — 6-րդ —	98 ›	62	›
Նոր 4%	84 ›	—	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	100 ›	—	›
— — 2-րդ —	99 ›	87	›
— — 3-րդ —	100 ›	—	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	269 ›	25	›
— երկրորդ —	242 ›	75	›
5½% բէնտա.	102 ›	75	›
Ոսկեայ բէնտա.	169 ›	—	›
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ. . .	135 ›	—	›
Նոր երկաթուղային բէնտա . . .	99 ›	37	›
5% գրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդ. ընկ. մետ.	143 ›	75	›
— — թղթադ. .	95 ›	25	›
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	98 ›	25	›
Գիւղական բանկի	103 ›	12	›
6% գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	— ›	—	›
— —Քութայիսի-18 և 43տ.	— ›	—	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	94 ›	75	›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ. .	93 ›	50	›
Օդէսայի — — .	95 ›	75	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	— ›	—	›

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրությունն բաւական ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Недавно пріѣхалъ въ Тифлисъ

ДАНТИСТЪ ВАЛЛАКЪ

Врачъ зубной хирургіи Бальтиморскаго факультета въ АМЕРИКѢ, практиковавшій въ ПАРИЖѢ и имѣющій дипломъ Дантиста изъ ДЕРПТСКАГО университета.

Принимаетъ больныхъ по зубнымъ болѣзнямъ ежедневно отъ 9 часовъ утра до 5 часовъ вечера у себя на квартирѣ, въ СОЛОЛАКАХЪ, домъ протоіерея ОРБЕЛИ, № 16.

1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկություն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Հինգշաբթի, ապրիլի 13-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOILIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկություններ մասին պէտք է դիմել ընկերության գործակալներին. Բաթումում Լէմլոզլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Արծրունի դալերէում, № 103.

1—2

БОЛЬШАЯ ПРЕДПРАЗДНИЧНАЯ

РАСПРОДАЖА

ՏՕՆԵՐԻՑ ԱՌԱՋ ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

կենտրոնական գալանտերիական մագազինում Երևանեան հրապարակի վրա, տուն Զուբալովի, Սէպտեմբրիայի և Սկուէրի դիմաց:

Ամեն տեսակ գալանտերիական, մոդային և տան տնտեսության առարկաներ. ձերմակեղէն, կօրսէտներ, ժէրսէ, զդեստներ, գուլպաներ (տղամարդկանց և կանանց): Ալբոմներ, նեսէսէրներ, կոսմետիական միջոցներ, մէլխիօրի և բրոնզեայ իրեր, լամպաներ, ամանեղէններ, երեխաների խաղալիքներ և այլն:

5—6

Дозволено цензурою, Тифлисъ 3 Апрѣля 1889 г.

Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.